

ՅԱԽԵԼՈՒԱԾ „ԱՐԱՐԱՏԻ“ 1906 Թ, ՄԱՐՏ

ԴԱԽԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ

Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց*

«Պատրաստեցէք տալ պատասխանի, ասէ համարձակադոյն յառաքեալսն Պետրոս, ամենայն խնդրողացն բանին, որ է վասն յուսոյն ձերոյ»¹, և այս ոչ միայն փոյթ զհեղգացեալսն զարթուցանել միտս, այլ և զպակասամտացն ի բաց լուծանել երկունս, զորս թերեւս անտեղի և յաւուր յայսմիկ ձեռնարկելոցն հարկաւորադոյն կրել. զի օրէն է նոցա զերբն յազադս Աստուծոյ ճառից որոշել ժամանակ: Եւ առ այս որով արդեւք ձեւակցութեամբ կամ առ ի՞նչ: Քանզի ոչ միով ոմամբ վրիպակաւ, և ոչ զոմնն, այլ գրեթէ զբնաւ իսկ զանդամս եկեղեցւոյ ի յայտ ախտս օցտեալ և պառակտեալ մախանաց չարին, զոր ասացեալոն յինքենէ յիւր կամս, յանվերծանելին եռոյց հերձուածողական խորխորատն եւ զօրէն օգոց ոմանց ի ծով մխելոց ամենայն ուստէք կայինա ամբօխեաց կեանս:

Այնքան աղջամղջաւ լովից** որիս շուրջ փակեալ մինչ զի անկարելիք նոքա գոլ նկատել, եթէ ընդ ծայրագոյն բարի անձանցն կռուին, որ է ինքն Աստուած, յորժամ զյստակ և զվճիտ հաւատոյ ուն կողոպտել ձեռնարկեցեն: Այլ զվիժածացն ախտացեալք յանկատար ծնունդս՝ խաբեալք եղեն յարգանդէ հոգեւոր աւաղանին ըստ վերստին ծննդեանն, յորս ոչ առողջ ի նոսա բերիւր դաւանումն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: Այսպէս օտարացեալք և վրիպեալք ի մայրենի գրկաց կաթողիկէ եկեղեցւոյ և ի սննդական դարմանոց հոգեպատում և աստուածախօս կաթինն, որ յընթերցուածական ստեանցն, ստույթիւն բարբառել ձեռնարկեցին ընդդէմ ճշմարտութեան, որոց ի վերայ եկեալ սխալանք երանաւէտ կենաց, սկզբնաչա-

* Աստուծոս սիրութիւնը հետեւեալ համարում կ'հրատարակենք:

Գ. Վ. Յովսէփեան.

1 Ա. Պետր. Գ. 45:

** Բնագիրը աղջատուած է անշուշտ այստեղ:

ըին լծակուիւք գտան և զուգակշիռք յեղկելի և յանտանելի տանջանս:

Եւ արդ սորա, զորոց բանքս, արժանի գոն աշակիսում հատուցման յարդարադասան աստուծոյ. որոց միշտ ի լսելիս հնչէ իմաստնոյն բան. «մի քան զարժանն ճարտարեր, գուցէ թիւրեացիս»¹: Իսկ արտաքոյ ինչ գրելոյն իմանալ առաքելականն ի բաց բերէ սահման և կազմէ կասկածագոյն: Եւ դարձեալ զգուշանալ բանին, որ յաղագս աստուծոյ և զաստուծոյ է, խրատէ առակօղն, որ յոյժն իսկ այստիկ էր քաջաբանագոյն: Այլ այսոքիկ անմտաբերելոցն ընդդիմանային, մանաւանդ եթէ յանդգնելոցն. իսկ մեզ ի հոգւոյն սրբոյ վստահելոց շնորհ, որոց արդարութեան հաւատոց ասպնջական եղև ոիրտ, նմանապէս և բերան, հարկեացի արբանեկել խոստովանական բանին: Զի սոցայն լծակցութիւն վեհագոյն կենաց հանդիպօղս զմեզ յօրինէ ըստ Պօղոսի ձայնին. քանզի ոչինչ մեզ սնափառութիւն այժմ կամ անտեղի գոյ յաստուածաբանութիւն մխել ճառո, մանաւանդ եթէ յոյժ իսկ ժամանակի, յորժամ զերկիւղածութեանդ ձերոյ ընկալաք ամենայորդոր փութով գիր: Բայց ոչ համօրէն կամեցողաց և ոչ վարկաբազի, այլ հարկաւոր համարիմ որոց յաղագս աստուծոյ հանդիսին* ներածեալ քան յինքեան: Ամենայն ուստէք լինելով և ամիսփելով քահանան միանգամայն զինքն և զենարան յարդարել և զըովանդակ ողջակիզեալ խոստովանական բան բարձրագոյնելով մարմնոյ և մարմնականացս և վեր ի լեառն համբառնալ աստուածակամ հնազանդութեան ի վայրէ գոգին երկրաքարշ և ստորաբերօղ խորհրդոյ և հանգիպեացի երանութեան մաքրագունիցն սրտից. որոց հանդիսարան գոլ տեսանեմք զնոյն ինքն աստուածն բան, և մրցանակ յաղթութեան զաստուածատեսութիւն խոստանալ, այն որ միայն է բարի և ընաւ իսկ վեհագոյն բարեաց պատճառ, լոյս անճառ և համօրէն պայծառութեան լուսոյ աղբիւր. կեանք անմահ և կենագործակ մահացելոց և անմահից, գոյ անեղ և գոյացուցիչ էիցս, էութեան անհիւթ, բնութեան անհատ, տարածումն ամիսփ, նրբութիւն անարգել, կար ամենազօր, հնար ամենահաս, բաւականութիւն անծախելի, էութիւն անթերանելի, փառք անհամեմատ, պայծառութիւն անզուգակշիռ, մեծութիւն անքակ, կերպարան նոյն ամենայն իւրք, իսկ բնութիւն պարզ և յստակ և առանց ի բազմաց գոյացեալ, անտեսանելի, անա-

1 Ժող. է. 17.

* Չեռաղիրը. հասոյիսդին.

տելի, անպարագրելի, անըմբռնելի, անքննելի, անհասանելի, անճառելի, հաւատալի և եթ: Եւ կամ եթէ զայս իցէ ոչ ընդ-
դէմ նմին որոշել սահման որ ի մեզն է յոյժ բարեձևագոյն ան-
ջատելի գոլ ի մտաց, անլռելի, ճառելի, միշտ նոյն ամենակալ
ամենայն ուրեք, և սակայն անխառն յամենեցունց, մի աստուած
յերիս անձնաւորեալ դէմս, ի նոյն ամբողջեալ ընութիւն, որոյ
անշաւելի լուսոյն ճառագայթ և մերձակայ հոգւոյն անըմբռ-
նելի, թէպէտ իմանալիք և հրեղէնք: Եւ զայնք արդիւն հա-
սարակաց հաւանելիս առաջի դնել վայելուչ բանիս երկրագործ,
աստուածային տեսչութեանցն ժամանեալ երջանիկն Եսայիաս
ի շուրջ կացեալ սերովբէկց ուսեալ զտէրն ընդունել երեքսրեան
փառաբանութեան իմանալի ձայնիւք ընդ թևոց ծածկութիւն
թաքուցեալք, և իբրև միջնորդովք ոմամք յանժողակալելոյն
յինքեանս ամբողջեալք ի բոցարձակ ճառագայթից*։ Եւ այս-
պէս զեկեղեցի աստուծոյ վարդապետաց երիս ընդունել անձինս,
զմի աստուածն և մի ընութիւն և մի տէր. յորոց ոմն ծնօղ և
միւսն ծնունդ, իսկ ոմն արտաքս առաքումն, ոչ ժամանակօք
գատեալք և ոչ երբեմն որոշեալք, ոչ երբէք սկզբունք և ոչ
անսկզբունք միապէս, այլ ոմն առանց պատճառի և ոմն պատ-
ճառաւ: Եւ ասեմ իսկ առանց պատճառի է հայր, էն միշտ
անսղիկզբն և յաւիտենական ազրիւր և պատճառ որդւոյ ծնն-
դեամբ և հոգւոյն արտաքս առաքութեամբ: Այլ և որդի և հոգի
ոչ յետ ժամանակի և ոչ սկսեալք, այլ անդէն ընդ պատճառին
գոլով ամենակատարք կամ թէ զնոյն ինքն կտակաւ սահմանե-
ցելով յաճից որ երթեալ հասանիցէ յակն և յազրիւր, ուստի
ոչինչ գոյ օտարացեալ կամ այլաբան, այլ ամենեկն նոյն, կամ
թէ պարզագոյն ասացից լոյս և լոյս և լոյս, մի ելով լուսոյն
ընութիւն, ըստ ումեմն նախ քան զմեզ իմաստասիրելոյ: Այն-
քան և եթ ընտրելիք, ըստ որում ոչ զանգանին դէմքն և ոչ
միութիւն ամբողջի. ոչ հայր զրկէ զորդի, այլ որդւոյ
ծննդեամբ կամ առաւել քան զորդի ունակութեամբ, բայց
զի ծնօղն է: Եւ ոչ որդի ճոխանայ քան զհայր, կամ ներգեկ
ինքն զոր ծնանելով կամ մարդեղութեամբն, բայց միայն զի
ծնունդ է: Եւ ոչ հոգին սուրբ զերկոսին յաղթահարէ, կամ
զիջանի հայր ումէք գոլով կամ եղբայր որդւոյ, թէպէտ ի հօրէ:
Այլ այսպէս մնացեալք ընաբար յերկաքանչիւրսն յատկութիւնք
երեք մի են, մասաւանդ թէ երեքն մի փառաբանի ամենասուրբ
երրորդութիւն: Չոր ինքն իսկ անտեսանելին ի տեսութիւն
արարեալ, եկեալ ծանօթագոյն զլսօղսն արար, ասելովն «ես

* Համեմատել Ես. 2. 2—4.

ի հայր և հայր յիս»¹, և «հողին սուրբ որ ի հօրէն ելանէ և յիմմէն առնու»², յորմէ հաւատադոյն տեղեկացեալ և հաւանեալ աստուածաբանութեանցն Յովհաննէս, ասէ. «դաստուած ոչ որ ետես երբէք, բայց միածինն սրբի, որ ի ծոց հօր նա պատմեաց»³ և զհամաբարբառս նոցին:

Եւ արդ, ո՞րք ախոյիլի ունի ընդդէմ ասել, զի ոչ որ օտարաբուն և կաթ անտեղեակ երրորդութեան, այլ նոյն ինքն սրբին, մին յերրորդութենէն, որ սւոյցոս. որով ի վախճան ժամանակացս խօսեցաւ հայր ընդ մեզ. որ է լոյս իսաւաց և նկարագիր էութեան նորա, և ոչ յափշտակութիւն համարեցաւ զգոյն հաւասար հօր⁴, այլ զանձն թափեաց և էջ յարդանդկուսին, առեալ ի նմանէ զծառային կերպ, ոչ յանապականէ, և ոչ ապականացու, այլ յապականացուէս անապականացուցեալ և յախտակրելոյս և մահկանացուէս անախտ և անմահացու* զոր օրինակի մեղանչելոյս անմեղ: Քանզի մինչդեռ նստեալ ի խաւարի միզացն և ի ստուերս մահու⁵, վերածագեաց արդարութեան արեգակն, որ զխաւար յանցանացն և զարկածս ախտից միահողոյն հալածեաց ի մէնջ և համենայն? ի բարձանց երկրային, այլ և երկնաւոր: Քանզի էջ առ մեզ անմարմինն և ել մարմնացեալ, ոչ մասն ի մարդոյ առեալ և ոչ ի մարդ ընակեալ. այլ մարմին բովանդակ և շունչ և միտս մարդկային յինքն խառնեալ և ընդ ինքեան ստեղծեալ և գոյացեալ: Եւ եթէ հաւատալ զինքն պահանջէ ասել. «բանն մարմին եղեալ, ըստ աւետարանական ձայնին, և ընակեալ ի մեզ»⁶: Ոչ եթէ յիւրում մարմին, ըստ ոմանց չարափառութեանց, որ զինքն սրբին յինքեան մարմին իբրեւ յումէք ասեն ընակեալ, այլ իւրովն իբրեւ զմեզ լինելով ընդ մեզ ընակեալ, ըստ այնմ զոր ինքն աստուածաբանն նախաձառեաց զյապագայսն բացակատարելոյ, թէ «ընակեացայց ի նոսա և գնացից ի նոսա»⁷: Ի նոսա, ասէ, ընակէ և ոչ ի նմա,

1 Յովհ. ԺԴ. 10. 12.

2 Անդ ԺԵ. 27 եւ ԺԶ. 14—15.

3 Յովհ. Ա. 18.

4 Փիլիպ. Բ. 5—7. Համ. Դիրք Թղթոց եր. 204. «Որ ի կերպարանս Աստուծոյ էր որպէս պատմի մի ըստ միոջէ, զինքն քափեաց, հնազանդեաց մահու եւ խաչի».

5 Ես Թ. 2. Սաղմ. ճԶ. 10.

6 Յովհ. Ա. 14.

7 Բ. Կոր. 2. 16. եւ Դիւտ. ԻԶ. 12.

* Ստեփանոս իմաստասէր, հրատ. Գ. Տ. Մկրտչեանի եր. 45 Դաւիթ Հարբացւոյց մէջ բերուած հատուածը.

Քանզի ոչ որ ինքն յինքեան ընակէ։ Եւ դարձեալ երեմիայոյ յաշադս որդւոյ ասէ. «աս աստուած մեր ոչ համարեոցի, այլ առաւ»¹, և յետ փոքր մի ասէ. «Եւ յերկրի երևեսցի և ընդ մարդկան շրջեսցի»². Իսկ Ջաքարիսոն ասէ. «ահաւասիկ եկի և ընակեցայց ի միջի քում, Երուսաղէմ»։ Եւ արդ եկեալ ի կատարել զկանխասացութիւն մարգարէիցն վերագոյն գոյացութեան դռեալ և անդր քան զընթերցան զայս հասարակաց. հրաշանան միտք, զիմրդ հոգս ընդ հոգոյս խմորի, և մեք յաստուած ընակիմք, մի զանկուած, ոչ բանն խոխել ի մարմնոյ թանձրութիւն, զի աստուածն ոչ ընդ փոխութեան է, ասողն «ես նոյն եմ և ոչ փոխութիւն», և ոչ զմարմնոյն ծախեաց թանձրամասնութիւն։ Քանզի ոչ էր պիտոյ առման, զոր վերստին ունէր եղծանել. այլ առ և առաւելոյց ընակցութեամբն վեհագունին յաղթելով։ Քանզի մանուկ ի կուսէ ծնանի և կուսութեան կնիք անխախտելի մնայ, այս գեր ի վերոյ է մարմնոյ և աստուածային և հրաշափառագոյն նշան. սակս որոյ և աստուածածին ասի կոյս։ Սոյն օրինակ և միանալ ըստին ընդ հոգեղինին և մի լինել ընթերցան. նորն? անդամ ի վեր քան զքան է և անճառելի, կամողին և եթ կարելի, որում ամենայն անհնարինք հնարաւոր դոն։ Իսկ եթէ տարակուսիս ի միանալն անյանի ընթերցանցն, տարակուսելի քեզ դոն և կուսութեամբն յղութիւն և յետ ծննդեան կուսութիւն, և կոյս միանդամայն դու և գիեցուցիչ որդւոյ։ Իսկ ապա թէ զայս հաւատով կնքես, նովին հաւատով զմիանալն անյանի ընթերցանցն ըսկալ ի հրեշտակապետէն, հաւատակից լեր կուսին, եթէ ոչ տկարանայ երբէք առ ի յաստուծոյ բան³։ Եթէ էր ընդ քննութեամբ, թերևս ոչ էր աստուածակերտ հրաշք. Իսկ որդի ի վեր քան զընթերցան տնօրէնեցաւ, փոխանակ հնոյ, նոր եղեալ ադամ⁴. զի զառաջին կուսին վտանգաւոր երկունսն լուծցէ, և զի ոչ էր կար մարդոյ եղծուլ զանիծիցն լծիւ, ինքն եկն նամակագիր նստիլիցն, և ամենայնի մերումս հաղորդեալ կրիցս, զբովանդակն ելոյծ։ Քանզի անփոփոխելին⁵ փոքրկացաւ և զժահահոտեալ մեղօք զմեր ընթերցանս իւր մարմին առեալ ոչ գարշեցաւ, և եցոյց ամենայն վտանգից գեր ի վերոյ։ Ամենա-

1 Երեմի.

2 Երեմի.

3 Բ. 10.

4 Ղուկ. Ա. 37.

5 2-ում «անդամ».

6 2-ում «ամփոփին».

կատարն տղայացաւ, յաւիտենականն այսօր ծնաւ, բանն և իմաստութիւն անոաց անբանութենէ տիոց, լոյսն անհամեմատ խանձարօրօք պատեցաւ, ի քերովբէս հանգուցեալն ի մոռը եղև առնկեցիկ, ուխտից եգօղն Արարհամու, թշխաթութիւն յանձն էառ. սուրբն սրբոց իբր սրբութեան պիտօղ ի տաճարն ածաւ. օրինացն տուիչ ընդ կարգաւ օրինի եմուտ, որում աղօթէր խի ծերունին զլուծումն կենաց, արձակումն կապելոց զնա ծանուցեալ: Զուրբ Յորդանանիս լուանի ի հուր մկրտօղ և ի հոգի և ի նախ անդ խի ցուցանէ* մկրտչին զիւր փառսն. ինքն մի յերրորդութենէն գոլ ընդ հօր և ընդ հոգւոյ. փորձի քաղցիւ, գեր ի վերոյ փորձանաց, և նախ քան ի դէպ ժամանակ ոչ սաստէ փորձողին: Ննջէ ի նաւին, որ անքուն ակամբ պահէ զխորայէ** և ի որոց? վրայ քայլէ ոչ օտար թեթևութեամբ աշխատի յուղեղնացութենէն հանգիստն աշխատելոց և ծարաւեալ, ըմպել հայցէ ի սամարուհոյն կենաց աղբիւրն: Եւ զի մի յերկարագոյնս ինչ բանիւս վարեցայց, կրէ, հրաշագործէ, կերակրի կերակրէ, խլէ զշղթայս մեղաց, աղբէ նախատեսաբար և հարցեալ ուսանի իբր անդիտակ. արտասուէ, կենածէ, զայւրանայ, տրտմի, աղօթէ, զարհուրի, զարկուցանէ, ըմբռնի, խաբաղանի, չարչարի, խաչի, մեռանի, արձակէ զշունչն իւր յիւրմէ մարմնոյն, յամէ եռօրեայ, յառնէ ճոխութեամբ: Զայս ամենայն յինքն կրեաց ճշմարտապէս բնութեամբ որդին առ երկաբանչիւրովքն բարեգծեալ ի մեզ կամաւ և ոչ բռնութեամբ. քանզի ոչ երբէք բռնադատիւր անմարմինն, որ անդատին իսկ ընդ միանալ ի բանն ընդ նմին գոյացաւ. վերագոյն մեղաց և ապականութեանց ախտից և մահու: Զի եթէ ի բռնութենէ գոյք ըմբռնեալ ի նմին բանտի, կապանակացն արձակումն տալ ոչ կարէր. այլ նա ինքն իշխանաբար զամենայն յանձն էառ, զի հաւատեաւ և ոչ առաջօք երևեալ մերում մահու հաւատարեաց միշտն կենդանի, և ի վիմի փակեցաւ պարունակողն տարերց, այն որ արգելեալն էր ի գերեզմանի, զհայրենին ոչ ի բաց մերկանայր աթոռ, այլ ընդ իւրում շնչոյն առ դժոխականոն պայծառանայր առելով կապելոցն. թէ «եւէք», և որոց ի խաւարին թէ «յայտնեցարուք», և յարուցեալ ի գերեզմանէն անփոփոխաբար և անյեղ առ թովմայեանոն մտանէ զրօքն փակելովք. յայտ արարեալ, թէ որ ի ծննդեանն ոչ խախտեաց զկուսութեան կնիք, և ոչ աստ ի մտանել ունի պէտս ինչ փակի:

* Զ-ում ցուցնէ:

** Սաղմ. Շարական ապաշխ. ԴԶ. Հմբ. եր. 196 եւ 275 (Պարգեւատուն). Էջմիածին, 1861 թ.

Այլ և շօշափելն ի Թօմայէ զինքն և զբեւեռացն վէրս, ոչ այլ ինչ նմա, որքան թէ զայս կամի արժանի հաւատոյ ճշգրտել պարգեւէ, թէ որով մարմնով բեւեռեալ ի խաչին վէրս յինքն առ, նովին թանձրամասն մարմնով յարեալ, և շօշափելի. ոչ փոփոխեալ և ոչ այլայլեալ և ոչ ի վիրացն բռնութենէ ընդ մահու գրաւեալ: Սոյն գունակ և զանկարօտ ճաշակումն յառաջ քան զյարութիւն յայտնի ցուցանել կամեցեալ, յազադս այնորիկ դարձեալ ճաշակէ և յետ յարութեան, և այսպէս զամենայն հայհոյացն խցեալ զբերան:

Համբարձաւ ի յերկինս ոչ վատթար ոք և կամ օտարաբուն ի հայրենի աթոռն հանգուցեալ, այլ նոյն ինքն աստուածն բան, որ յերկնսուտ էջ և մարմնացաւ, զոր և Պօղոս գռչէ. «որ ելն զինչ է, ասէ, եթէ ոչ զի էջ նախ, որ ի ներքնագոյն կողմն երկրի էջն, նոյնն է, որ ելն ի վերոյ քան զամենայն¹»: Եւ ինքն իսկ իջօղն և ելօղն որդին մարդոյ ասէ. «ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ²», զի ելանիցէ ուր էր զառաջինն, և թէ «երթամ ես առ առաքելն իմ», և թէ «առ հայր երթամ»³: Ածեալ սովիմբ վասն երկրորդ գալստեանն, «տեսանիցէք, ասէ, զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան և եկեալ ընդ ամպս երկնից»⁴: Ամպովք գայ քրիստոս յիսուս տէր յոյսն մեր և բազմութեամբ հրեշտակաց և հայրենի փառօք, զոր տեսաւ յառաքելոցն երթեալ յերկինս, զի և երեւեսցի ոքանչելի ի մէջ սրբոց իւրոց⁵ և ահարկու տեսակ ատեւեաց, և յամօթ և ի նախատինս հերեսական յամառութեանցն, որք ընդ անիրաւութիւն հաճեցան և զրկեալք եղեն ի ճշմարտութենէն: Առ որովք ծածկեցաւ աւետարանումն փառացն Քրիստոսի, որ երեցաւ մարմնով, վկայեցաւ հոգւով, ցուցաւ հրեշտակաց, ծանուցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի և վերացաւ փառօք. որում կրկնէ ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և վայրասանդանդարամետաց*, և ամենայն լեզու ընծայէ բան, թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր»⁶:

Արդ, որ ոք ձայնակից է այսմ վերագրեալ հաւատոյ, ըն-

1 Եփես. Գ. 40.

2 Յով. Գ. 45:

3 Յով. ԺԶ. 5 եւ ԺԶ. 40. 46. 28.

4 Մատթ. ԻԶ. 64. Մարկ. ԺԴ—62.

5 Բ. Թես. Ա. 40.

6 Փիլիպ. Բ. 40—44.

* Գիրք Թղթոց եր. 50 «յերկրաւորաց եւ յերկնաւորաց եւ ի

վայր սանդրամետիցն»:

դունի զայնպիսին կաթուղիկէ եկեղեցի և մեք. իսկ որ այլ իմն էութիւն դնէ հակառակ կամ հաւասար որքոյ երբորդութեան կամ երկու անսկզբունս բոտ աւանձնաւորութեանցն, կամ մի դէմ և մի անձն յաղաքս նոյնութեան ընութեան, կամ գնիցէ անսկիզբ և զամն սկզմամբ, իբր թէ յետ ժամանակի գոյացեալ, կամ թէ նուառտացուցանէ զորդի քան զհայր օտարացեղութեամբ կամ պատուով, կամ զհոգին սուրբ խոնարհադոյն դնէ հօր և որդւոյ, կամ որ և է պատճառաւ ամբօխէ զերրորդութեան կարգ, կամ թէ յաւելուած յերրորդութիւն դնէ զմարմին որդւոյն, կամ թէ առաւելեալ կամ նուազել ի վառաց ասէ զորդին տնօրէնութեամբն, կամ ոչ ասէ զբանն առտուած մարմնացեալ ի սուրբ կուսէն, այլ զայլ ոմն եղեալ քրիստոս, կամ յերկնուստ ասէ բերեալ զմարմինն, և կամ առաջօք և ձևով միայն ցուցեալ, և կամ յայլմէ ընութենէ դնէ, ոչ ի մերմէ ստեղծական մահկանացու ընութենէս, կամ ի մարդ ասէ ընակեալ զբանն կամ յեղեալ ի մարմին և յոսկերս, կամ մասն մարդոյ ասէ առեալ, այլ ոչ բովանդակ զմեր ընութիւնս, կամ մարգածին զկոյսն աւանդէ, այլ ոչ առտուածածին, կամ թէ երկուս յարէ ընութիւնս ի միմեանս մի որդի պատճառելով և երկաքանչիւրոցն որոշէ զիւր ներգործութիւնս, իբր թէ մարմինն զիւրն կրէ տկարութիւն, իսկ առտուածութիւն զիւրն բացակատարէր սքանչելիս, որ է յայտնապէս երկուս ամպարշտեալ որդիս, կամ թէ շփոթէ և եղծանէ դարձեալ զընութիւնսն ի միանալն, կամ ի ներքոյ ընութեան վտանգից գրաւէ զմարմինն ի ծննդենէն մինչև ցիւսչն և ընդ ապականութեամբ և ընդ մահուամբ, և յետ յարութեան յայլ իմն ընութիւն փոխայեղէ զորդի, քան զայն որ ի կուսէն ծնաւն, իբր թէ ապա վառաւորեցաւ և յանկատարութենէ եկն ի կատարումն և յապակա-նութենէ յանապականութիւն և ի թանձրամասնութենէ ի նըրբատեսակ փոխեցաւ ընութիւն, և յեղու և այլայլէ զմարմինն, քան զայն, որ անդոտին իսկ ընդ առնումն իւր միացոյց առտուածն բան, կամ որ ի բաց եղեալ ասէ այժմ զմարմինն, կամ թէ ոչ արժանի վարկանի զմարմին որդոյն հայրենի աթոռոյն և ճեղքէ* զնա յետ մի առտուածութենէն և դնէ զառտուածն յիւրում փառսն ճոխանալ, իսկ զմարդն կալ յայժմ ևս ի ծառայութեան հարկի, որպէս այժմուք ուռեալ նոր և չարագլուխ ամպարշտօղն հայհոյէ: Զայսպիսին խորհողս նզովէ կաթուղիկէ եկեղեցի և մեք:

Եւ եղիցին նզովեալք:

* Զ ի մէջ «ոչ ճեղքէ», որ յայտնապէս սխալ է:

ՆՈՐԻՆ ԴԱԽԹԻ Ի ՀՐԱՄԱՆԷ ԱՆԱՍՏԱՍՈՒ

Հայոց կաթողիկոսի

Այլ զի քս բարեփառութիւնդ յօժարեաց դաւանութիւն յերկաքանչիւրոցն պահանջել հաւատոյ, ո՛վ երջանիկդ հովուապետ, արդարեւ իսկ հօտառէր, օրինօք հաւանեմ զքեզ յայս կամաւ շարժեալ, զոր ոչինչ և ինձ գոյ փութալի, որ քան եթէ դրով տալ բարեպաշտաբար զառ ի յիսս խոհեցեալսս, միայն թէ հոգոյն շնորհ հասցէ մերուժ բանիս ի թիկունս, քանզի զանձն իմ հաւատամ բարեմտաց, որոց թուելի, ոչինչ այլ գոլ ըզձալի, որ քան թէ առ նիկիահայն սահմանն պահել միաբանութիւն և առ նոյնախոհոյն:

Բայց նախ արդէն իսկ համառօտ ընձեռութիւն առնելով, զի ոչինչ իմ նախ քան զմիշտ էալն իմացեալ, որ ընդ ձայնին հալածէ զսկսեալսն ի ներքս զանոպառն ամբելոց և զնոյն ամենահալ, որում երկս գոլ հաւատալ անձինս և այսոցիկ զերկաքանչիւրսն որոշեմ առանձնականս: Զի ընդ հայրութեան սահմանաւ գիտեմ զհայր փակեալ ծնօղութեամբ և ոչ յումեքէ պատկեր, փչօղ կենդանական զշունչն և ապրեցուցիչ ի մահ դատապարտի անպարտականն մահու, որէն դատիչ կենդանեաց և մեռելոց: Ընդ այս ամենայն կարգաւ ուղևորի փրկիչն ընդ կրօն կենցաղոյս, եղեալ մարդ ճշմարիտ, զի զնախաձայնեալսն ընուցու զիւրոցն ծառայից: Արդ գիմեալ ելանէ ի խաչ ոչ մարդ որդուհնաբեայ, այլ բանն մարմնացեալ: քանզի միաձինն վասն աշխարհիս տուեալ լինի, անչարչարելին չարչարի, կեանքն սպանանի, ըստ իս և Պետրոսի անմահն զմահն ճաշակէ: զսոյն յոլովակի ճառէ և Պօղոս:

Բայց մի՛ սոսկ քանին Ընութեան զայս հաշուեսցիս, զոր և ոչ ես, այլ զի ի մարմին անչարչարելին միացաւ, սեղմ և անքաղ, և շունչս և միտս մարդկայինս խառնեաց յանխառն աստուածութիւնն իւր և հաւասար հօր և հոգւոյն՝ հանդերձ մարմնութիւն: Վասն այսորիկ անմահն աստուած մեռանի հանդերձ իւրով մարմնութիւն, թէ զանմահութիւն անխախուտ պահէ ի գերեզմանի զնանի զոյգ մարմնոյն և ընդ շնչոյն միացեալ, առ շունչս իջանէ մեռելոց, զի զարգելեալսն վերածեսցէ: Սորա վասն ասարեք ամենայն սասանեցան, ոչ կարացեալ ըրել զանարգանս ինքեանս արարչին, յերբորդ աւուր յառնէ կենդանին յաւիտենից զմահ ջրելով, զի ես ոտնհարից, և պարծի ըստ իս ի խաչն նորա ընդհանրական եկեղեցի, զի և հրեշտակք և Պօղոսի թուի

համբառնալ * ի յերկինս շինէ որդի մարդոյ և զաւետիս մեզ հիմնէ: Համբառնան զբունք վերին ի մասնէն նորա ուր էրն յառաջ, և ամպը ընդունին, զի փոշի են ոտից նորա: Ընդ հօր զնստելն ունի անընկեց մարմնովն, այլ յաւելուած յերրորդութիւն ոչ դործէ. հանդերձեալ է գալ նովին մարմնով և փառօք հօր, սքանչելի երևելի ի մէջ սրբոց իւրոց և ահագին տեսալ տալեաց. և թագաւորութեան նորա վախճան ոչ ունի, այլ փառաւորեալ է ընդ հօր և ընդ հոգոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Զայս ինքն յինքենէ ուսոյց մեզ որդի, ինքեամբ ծանոյց զհայր և զհոգի, և զիրք սուրբ վարդապետեցին առաքելական և մարգարէական կտակը, և յիւրաքանչիւր ժամանակս կացեալ ուղղափառ վարդապետք: Եւ այժմ ես տրուպս զիւրաքանչիւր ոք յառտիճանի սրբոյ եկեղեցւոյ զճշմարտասէրս և զճշմարտախոհս զամենեւեան ի դէպ ժամանակի ազաչեմ եղբայրասէր օրինօք առ ի մէնջ զրելոցս հանդիպել, և զթերին ի սմա ընուել, զաւելին կշռել և զըովանդակն կնքել, զվնասախորհսն արտաքս պարսպել և ամենեւեմ ի մեզ զմիաբանութիւն փակել, ամբողջ յանձինս պահել զհաւատն՝ զդեղն կենաց: Զի նովաւ կարասցուք զերծանել յանսպառ տանջանացն, և լիցուք վայելել ի յաւիտենական կեանս, «զոր յիւր ժամանակս ցուցանէ երանելին և միայն հօրն, թագաւոր թագաւորաց և տէր տէրանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ետես ի մարդկանէ և ոչ տեսանել կարող է ¹⁾», զի տեսցուք զնա, որպէս և քրիստոս յիսուս աստուած մեր. և ընդ նմա և հօր և հոգւոյն սրբոյ փառս տացուք յաւիտեանս և յաւիտենից, ասացեալ յաւիտեանս ամէն:

Նորին ի խնդրոյ Առնոյ պատրիկի.

Բան զոր հարցանէք, ո՞վ բարեփառութեան հարցափորձօղ, աստուածապահ տէր իմ, թէ զի՞նչ միտք և բնութիւն ** ասելն առնէ բանին և մարմնոյն, և զի՞նչ որ երկուսն ասեն բնութիւնս յետ միանալոյն բանին ի մարմնին իւր, և որպիսի՞ ինչ

1 Ա. Տիմոթ. 2. 15—16:

* 2-ի մէջ «համբառնալիս յեկինս» հաւանօրէն աղճատուած շարունակութիւնը:

** 2-ի մէջ ակներեւ եղծուած է, ինչպէս մի քանի տող ներքեւ հիւղինակի տուած բացատրութիւնից երեւում է:

յերկուց բնութեանց միացեալ ասելն իցէ զբնութիւն որդւոյն աստուծոյ յաստուածութենէն և ի մարդկութենէն, եւ եթէ որ է ճշմարտութիւն, որով եկեղեցի աստուծոյ խոստովանի զուղիղ հաւատն:

Լուծումն այսպիսի ինչ է այդոցիկ խնդրոց, որքան կարճ ի կարճոյ մարթի յիշեցուցանել:

Որք մի ասեն բնութիւն բանին և մարմնոյն, կատարեալ են ամպարիշտք. զի մարմինն ի կուսէն է և կոյսն զուսոր Դաւթայ և Աբրահամու, որպէս ասաց առաքեալ զքրիստոս ի հրէից ըստ մարմնոյ 1, և եթէ զդասակէն Աբրահամու բուռն հարկանէ, այլ Աբրահամ և մարգիկ ի նախահօրէն Ադամայ և յերկրէ ունին սկիզբն, իսկ բանն աստուած հոգեղէն՝ ստեղծիչ Ադամայ. քանզի ամենայն որ ինչ եղեն, բանիւն ասէ Յովհաննէս «և առանց նորա եղև ոչինչ, որ ինչ եղեն» 2: Եւ արդ զի՞ աստուծոյ անեղի և արարչի ի հոգոյ ժամանակաւ արարելոյ ի նմանէ մի իցէ բնութիւն: Իսկ չորրորդութիւն այսպէս առնեն այսպիսի խոստովանողք զերրորդութիւն. զի մի բնութիւն է աստուծոյ և հօր և բանին և սուրբ հոգւոյն և երեք առանձնաւորութիւնք. մի բնութիւն հայր և որդի և հոգին սուրբ: Ապա թէ և մարմնոյն և բանին ի? բնութենէ, որպէս բանին և հօր մի է բնութիւն, և զիւր համարուն մարմինն զգեցաւ բանն. չորք սոքա նախ քան զմիանալ բանին և մարմնոյն լինին. հայր և հոգին սուրբ, բանն աստուած և մարմինն: Այլ միանալ բնութեանցն ոչինչ այլ նշանակէ, եթէ ոչ զի օտար նախ միմեանց էին բնութիւնքն, որ յետոյ միացան մարմնանալովն աստուածն բանի: Ապա յերաւի եղիցի մեզ զայնպիսիսն խոստովանողս անուանել կատարեալ ամպարիշտս:

Իսկ որք երկու ասեն բնութիւնս յետ միանալոյ բանին և մարմնոյն, զմինն աստուած սոսի արտաքոյ քան զմատունս մարմնոյն, անտես և անշօշափ, հօր և զիտակ, և զամենայն զհօր դնեն ի վեր քան զկարիս և ապականութիւն և մահ, իսկ զմիւս բնութիւն մարդ մահկանացու, ազէտ, անզօր, ի ներքոյ ամենայն կարեաց և ապականութեանց, եւ յետ Լ աւելի ամաց յառաւել քան զայս փոփոխեալ բնութիւն: Զայսպիսին ասաւ զս թէպէտև բանիւ ոչ, իրօք երկուս ցուցանեն, որպէս թէ և անձն մի համբաւեն կամ ոչ առեալ սոքա ասեն մարմնի կուսէն կամ ի գոյացեալ նախ բնութիւն մարդոյն բնակութիւն մշտնջենաւորութեան ցուցանի ի մարմնին զաստուած բանն, որ ոչ այլ և այլ, բայց սոյն յայտնէ, եթէ ոչ հաւատան, եթէ բանն մարմին եղև, զի եթէ հաւատալի էր նոցա բանին մարմնանալ, ոչ բաժանէին զբանն յայն իմբէ, որ ինչ ինքն եղև. և զինչ մասն է և եթէ մասն է և միացոյց զսա իւր յարգանդի կուսին, և այժմ ապականացու է, զի միացեալն ոչ եթող. և եթէ եթող ըստ քեզ յետ յարութեան, կիսամարդ է և ոչ կատարեալ մարդ, իսկ եթէ դատապարտութեան յանցանաց արկածք տանջանաց բնա-

1 Հովով. Թ. 5.

2 Յովն. Ա. 5.

ւորեցան. իսկ յիսուս ոչ անկաւ ընդ բանասերէիս իշխանութեամբ, ուստի և յիւրոցն ասէ «առ իս ինչ ոչ գտանէ»¹. զի—
առիք տնօրինէր ապականութեամբ զփրկութիւն ապականելոցս,
այլ ահա «մարմին նորա ոչ ետես զապականութիւն» մարգարէն
կըքեաց բանիւ²:

Դարձեալ եթէ ծնելութիւն և կաթնղիեցութիւն և աճե-
լութիւն հասակի և թլիհատութիւնք և կրականութիւնք համայնք
և չորչորանք համայնք և խոցումն և մահ և թաղումն ապա-
կանութեան ցուցակութիւնք են ըստ ձերոց աղանդաբանու-
թեանդ և աշխարհի փրկութիւն ի ձեռս այսց մատակարարեցաւ,
յայտ է, եթէ ոչ առտուծոյ առ մեզ երախալք զոն փրկանաւորու-
թեան, այլ ապականութեան զայս մեզ առ գծեալ և յափշտակեալ
ի բանասերէիս իշխանութենէ զսա մեզ պաշտելի է և երկրպա-
ղելի զապականութիւնս և սմա առ կարգալ փրկիչ: Աւանդ
յիմարութեանդ, մարդկային ապականութեանս ծնելութեան և
յառաջնադուցութեան հայր զսերմն առն ծանեաք ի ձեռն
կնոջ, իսկ ապականութեան մարմնոյ բանին ծնելութեան զս³
տեք զոլ հայր ի ձեռն մարիամայ, զի ի հօրէն ծանկցութեա
պականութիւն: Դարձեալ զմարիամ ըստ բնութեան իւրոյ
գոյացութեան ասէք տնայադան զոլ, եթէ ըստ ծննդեան
զբանն առտուած մարմնացեալ. եթէ ըստ բնութեան գոյացու-
թեան, ասելի է ի մերմէ բնութենէս մարիամ, իսկ եթէ ըստ
ծննդեանն⁴) է անապոկան և է և ասի, զիմարդ ծնեալն ի նմանէ
ապականացու: Դարձեալ ապականութիւն բնութիւն ունի՞ ըստ
կնքեան, թէ ոչ. քանզի եթէ բնութիւն, սաեղծուած սաեղծչի
առնուլ ասելի է և միացուցանել ընդ ինքեան. իսկ եթէ ոչ
ունի բնութիւն ըստ կնքեան, ոչ սաեղծուած սաեղծչին, այլ ի
պատրանաց թշնամոյն ներդործեցաւ ի մարդկան յանձնիշխա-
նութեան գործոց կշտամբութիւն ընդունել ի տեառնէ: Իսկ
առտուածն բանն զինքեան սաեղծուածն առ և միացոյց իւր և
ոչ զբանասերիս ին ներգործութիւն:

Զայսոսիկ այնք խուզին և հարցաքննութիւն արկունեն, որք
ի սահմանս զուգնարեայ մարդոյ իջնոցանել զնա խոհան, իբրե
մի որ ի հասարակաց գոյացելոց ի տեառնէ: Ըստ որում և ոչ
առտուած մարդ եղեալ խոտաովանին, այլ ի մարդումն բնակիլ,
աստուստ և մարիամ օտարանայ զոլ առտուածածին: Եւ այս է
Պօղեայ Սամոստացւոյ նախատացութեան սահման և որք ըստ այսմ
ձայնակիցք նախկինք և այժմուքս, անուրք և յողողողք, որք զմի
առտուածն զբրիտանոս ուրացեալք, ածեն ի վերայ անձանց զե-
րադոհան կարուստ, ըստ նախատացութեան առաքելոցն առ-
տուծոյ: Զայսպիսի խորհոյան տարագրէ կաթուղիկէ եկեղեցի և
մեք: Եւ եղիցին նորովեալ:

1 Յովհ. ԺԲ. 50.

2 Գործ Բ. 51 հա՛հ. Աղոմ. ԺԵ.

* 2-ի մէջ եղծուած է այս բանը. կարդացում է լեւն, բայց նա-
խորդ խօսքին ի նկատի առնելով, կարծում ենք ձեկեղեան բանի մնա-
ցորդն է այդ: